

«Երևան Զուր» ՓԲԸ-ի սպասարկման փարածքում խմելու ջրի սպառման ծավալների մոնիթորինգի անցկացման արդյունքների ամփոփում և վերլուծություն

«Երևան Զուր» ՓԲԸ-ի առաջարկված ճշգրտված սակագների հաշվարկում ներառված մանրածախ ջրամատակարարման ծավալների ուսումնասիրության նպատակով ՆՏ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի 2007 թվականի մարտի 16-ի 044Ն հրամանով ստեղծված աշխատանքային խումբը ուսումնասիրության աշխատանքներն իրականացրեց 2007 թվականի մարտի 19-ից մինչև 29-ը ընկած ժամանակահատվածում: Ուսումնասիրությունն իրականացվեց «Բնակչություն» և «Իրավաբանական անձինք» սպառողական խմբերի մոտ: Ընդ որում, «Բնակչություն» խմբի ջրի սպառման ծավալների ուսումնասիրության նպատակով առանձնացվեց 2006 թվականի ընթացքում 0-12 մ³ միջին ամսական ջրի սպառման ծավալ ունեցող բաժանորդները, որոնցից ընտրանքային կարգով ընտրված բաժանորդների 1%-ը պետք է ենթարկվեր մոնիթորինգի, իսկ «Իրավաբանական անձինք» սպառողական խմբին ուսումնասիրության ենթարկելու նպատակով առանձնացվեցին 750 խոշոր սպառողները, որոնցից առաջին 50 ամենախոշոր սպառում ունեցող բաժանորդները պետք է ենթարկվեին պարտադիր մոնիթորինգի, իսկ մնացած 700 բաժանորդներից նույնպես ընտրանքային կարգով ընտրված 10%-ի մոտ պետք է իրականացվեր մոնիթորինգ:

Արդյունքում, աշխատանքային խումբը «Բնակչություն» սպառողական խմբի բաժանորդներից այցելեց 936 բնակարան, որոնց 559 բաժանորդներից հնարավոր եղավ (777 հար ջրաչափի) ցուցմունք վերցնել:

«Իրավաբանական անձինք» սպառողական խմբի առաջին 50 ամենախոշոր սպառում ունեցող բաժանորդներից աշխատանքային խումբն այցելեց 48 բաժանորդների մոտ, իսկ ընտրանքային կարգով ընտրված 70 խոշոր սպառողներից մոնիթորինգի ենթարկվեց 66 բաժանորդ:

Աշխատանքային խմբի կողմից մոնիթորինգի արդյունքների վերլուծության ընթացքում պարզվեց հետևյալը.

I. Մոնիթորինգի ենթարկված «Իրավաբանական անձինք» 114 բաժանորդներից 24-ի կամ 20%-ի մոտ (տեղեկանքը կցվում է) փոխվել էին ջրաչափական սարքերը, սակայն, ջրաչափական սարքերի փոխման գործընթացն ընկերությունում կանոնակարգված չէ, մասնավորապես, արձանագրված չեն այն դեպքերն ու պարճառները, որոնց հետևաբանով փոխվել են այդ ջրաչափերը և մեծ մասում մինչև փոխարինումը իրացման ծավալների վերահաշվարկները:

II. Մի շարք բաժանորդների մասով ապահովված չէ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների պահանջները, մասնավորապես, այն դեպքերում, երբ ջրի սպառման ծավալը պետք է հաշվառվի խողովակի թողունակությամբ, ընկերությունը

կիրառում է այլ մոտեցում, որը սահմանված չէ նշված կանոններով, մասնավորապես, ՏՏ պաշտպանության նախարարության ենթակա կամակերպություններում «լիմիտ» հասկացությունը:

III. Ընկերության փվյալների բազայում չի երևում, թե որ բաժանորդն ունի ենթաբաժանորդ, ինչպես նաև որ բաժանորդների մոտ կան փարանցման գծեր, այս առումով հարկ է նշել, որ ընկերությունում կանոնակարգված չէ նաև այն դեպքը, երբ փարանցիկ խողովակների ջրաչափերից որևէ մեկի չաշխատելու դեպքում ինչպես է հաշվառվելու փվյալ բաժանորդի ջրի սպառման ծավալը:

IV. Մոնիթորինգի ենթարկված բաժանորդների մոտ հայտնաբերվել են առանց կապարակնիքների ջրաչափեր, մասնավորապես՝

- խոշոր 50 բաժանորդներից 4-ի մոտ,
- խոշոր 70 բաժանորդներից 1-ի մոտ,
- բնակչությունից 14-ի մոտ:

Մոնիթորինգի ենթարկված բաժանորդների ցուցմունքների վերլուծության և ամփոփման արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում: